N ԱԱ-22
13 օգոստոսի 2019թ.

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
պարոն Ա. Հարությունյանին

Տեղեկություն ստանալու Հարցում

Հարգելի՛ նախարար,
Եվրոպական Միության կողմից համաֆինանսավորվող և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում, ս/թ. օգոստոսի 1-ից «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կանաչ արդարություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում, մենք նախատեսում ենք զբաղվել նաև Երևանի Դալմայի այգիների (որոնք նախքան ՀՀ կառավարության 27.03.2003թ. «Երևանի Դալմայի այգիների պահպանման և նպատակային փոփոխության ենթակա սահմանների մասին» թիվ 1941-Ա որոշումը ընդգրկված են եղել պատմամշակութային հուշարձանների ցանկում), որպես հանիրավի անտեսված պատմա-մշակութային, ինչպես նաև Բնության հուշարձանի, շահերի պաշտպանությամբ:
Այդ պատճառով, համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիությոն մասին» (Օրհուսի) կոնվենցիայի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեզ տրամադրել ներքոնշյալ տեղեկատվությունը.

- որքա՞ն է եղել Դալմայի այգիների ընդհանուր տարածքը, ըստ ՀՀ մշակույթի (նախկին) նախարարության տվյալների, նախքան վերոնշյալ 1941-Ա որոշմամբ նախատեսված փոփոխությունների իրականացումը,
- ի՞նչ կարգավիճակով է այն եղել:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է Հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում և այդ գրավոր հարցման գործավարությունն էլ իրականացվում է քաղաքացիների դիմումների և բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձևերից առանձին: Ուստի խնդրում ենք սույն Հարցմանը պատասխանել Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Հարգանքով՝
«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ նախագահ՝

Մարի Չաքրյան _____

Հասցե՝ Գ. Մահարի 64, Երևան 0020, հեռ. 093 991212
«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ